<<Հաստատում եմ>>

Նոյեմբերյանի համայնքապետ _____Կ. Աբազյան

<<20>> _____ 2017թ.

Ծրագրի անվանումը. Հաշմանդամ ընտանիքների բարեկեցություն՝ հաշմանդամների բնատուր ունակությունների զարգացման և ներդրման ճանապարհով:

Ծրագրի նպատակը. Նոյեմբերյան համայնքի հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքների կենսամակարդակի բարձրացումը՝ հաշմանդամների համար նոր աշխատատեղերի ստեղծման, սեփական արտադրանքը և մատուցվող ծառայությունները վաճառքի հանելու հնարավորության տրամադրման ճանապարհով:

Ծրագրի նկարագրությունը. Նոյեմբերյան խոշորացված համայնքը առաջնայնորեն կարևորում է համայնքի բնակչության սոցիալական պաշտպանության խնդիրը: Համայնքապետարանը իր բյուջեյի հնարավության շրջանակներում իրականացնում է բարեգործական, օժանդակության, ենթակառուցվածքների ստեղծման առանձին ծրագրեր ու միջոցառումներ՝ օգնելով սոցիալապես խոցելի խմբերին, ծանր իրավիճակում հայտնված առանձին քաղաքացիներին և ընտանիքներին: Բնակչության սոցիալական վիճակի վատթարացումը առաջնահերթորեն պայմանավորված է գործազրկության բարձր մակարդակով: Հատկապես ծանր վիճակում են հաշմանդամները: Գաղտնիք չէ, որ նրանց համար անգամ նվազագույն վարձատրությամբ աշխատանք գտնելը մեր օրերում գրեթե անհնար է: Սակայն համայնքում բնակվող հաշմանդամների մեջ զգալի թիվ են կազմում ոսկեձեռիկ անհատներ, ովքեր վարպետացել են տնայնագործական իրերի և գործիքների, հուշանվերների, ավանդական արհեստագործական և կիրառական արվեստի նմուշների արտադրության մեջ: Այս գործում իրենց անուրանալի ավանդն ունեն սոցիալական պաշտպանության ոլորտում համայնքում ակտիվ գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները, որոնցից աչքի են ընկնում <<Հույսի կամուրջ>> հաշմանդամություն ունեցող երեխաների զարգացման և սոցիալական աջակցության հասարակական կազմակերպության Նոյեմբերյանի մասնաճյուղը և <<Նոյ աստղ>> հաշմանդամների ընտանիքների աջակցության հասարակական կազմակերպությունը:

<<Հույսի կամուրջը>> ըստ էության իրականացնում է 7-18 տարեկան հաշմանդամ երեխաների սոցիալական զարգացման մանկավարժահոգեբանական վերականգնողական ծառայություններ: Դրանք ներառում են ոչ միայն կյանքի համընդհանուր հմտությունների այլև ըստ երեխաների անհատական բնատուր ընդունակությունների և նախասիրությունների՝ արհեստագործական և արվեստագործական հմտությունների ուսուցանումը և զարգացումը: Արդեն մեկ

տասնամյակից ավելի պատմություն ունեն <<Հույսի կամուրջ>> ՀԿ –ում գործող խեցեգործության, նկարչության և կիրառական դեկորատիվ արվեստի կենտրոնները, որտեղ Նոյեմբերյան համայնքի բնակավայրերի տասնյակ երեխաներ դարձել են արհեստավարժ իրենց սիրած գործում, ձեռք են բերել մասնագիտություններ: Այդ կենտրոններում մշտապես ներգրավված են ավելի քան 30 երեխաներ:
<<Նոյ աստղ>> ՀԿ-ում երեխաները հմտանում են ձեռագործների, խաղալիքների պատրաստման, սպիտակեղեն և հագուստ կարելու գործում: Այստեղ մշտապես հաճախում են 10-12 երեխաներ:
Տարբեր բարեգործական և դրամաշնորհային ծրագրերի շնորհիվ կենտրոնները հագեցված են տեխնիկական համապատասխան միջոցներով: Ուսումնական պրոցեսներն իրականացվում են հմուտ և փորձառու մանկավարժ-վարպետների կողմից: Խնդիրը կայանում է նրանում, որ արդեն չափահաս դարձած հաշմանդամ վարպետներից շատ քչերն են կարողանում իրենց համար արվեստանոց կամ արհեստանոց ունենալ, անգամ դրանց առկայության դեպքում կրկին ու կրկին առաջնային խնդիր է դառնում պատրաստի արտադրանքի սպառումը: Նոյեմբերյան քաղաքում արդեն վաղուց ծառացել է քաղաքային մանրածախ շուկա ունենալու հիմնախնդիրը: Պետական աջակցության շնորհիվ Նոյեմբերյան քաղաքի կենտրոնական հատվածում գտնվող, նախկին պոլիկլինիկային հարող պետական սեփականություն համարվող տարածքից համայնքին կնվիրաբերվի 2185 քառ. մետր հողամաս, որտեղ նախատեսվում է կառուցել քաղաքային շուկայական համալիր: Համալիրը, բացի համապատասխան արդի ենթակառուցվածքները, իր մեջ կներառի առևտրի բացօթյա տաղավարներ և փակ տաղավար-արհեստանոցներ: Այս ծրագրի շրջանակներում փակ տաղավար-արհեստանոցների մի մասը /50քառ. մետր ընդհանուր աշխատանքային մակերեսով/ անվճար կերպով կտրամադրվի հաշմանդամ վարպետներին, ովքեր ոչ միայն հնարավորություն կունենան վաճառքի հանելու իրենց աշխատանքները, այլև զբոսաշրջիկների և այցելուների աչքի առաջ, տեղում իրականացնելու դրանց պատրաստման գործընթացը: Վերջինս, անշուշտ, մեծապես կնպաստի արտադրանքի սպառման ծավալների աճին: Քաղաքային շուկան կունենա նաև այլևայլ ծառայությունների / վարսահարդարում, կոշիկների վերանորոգում, կարուձև և այլն/ սպասարկման կետեր, որոնք նույնպես հաշմանդամ արհեստավորներին կտրվեն անվճար հիմունքներով /նախատեսվում է մոտ 20քառ. մետր/: Համայնքը իր վրա կվերցնի նաև բոլոր վերոնշյալ հատվածների կոմունալ ծախսերը: Շուկայի համապատասխան տաղավարներում վաճառքի կհանվեն նաև <<Հույսի կամուրջ>> և <<Նոյ աստղ>> կազմակերպություններ հաճախող հաշմանդամ երեխաների ձեռքի աշխատանքները: Համագործակցելով տեղի և դրսի գործընկեր կազմակերպությունների ու բարեգործների հետ, համայնքապետարանը քաղաքային շուկայի տարածքում նախատեսում է կազմակերպել արհեստների ու արվեստների ամենամյա փառատոն, որի ընթացքում մասնավորապես կիրականացվի հաշմանդամ վարպետների ձեռքի աշխատանքների, ստեղծագործությունների և արտադրանքների ցուցահանդես –վաճառք: